ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 օգոստոսի 2023 թվականի N 302 -Ա

«ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2022-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵԼՔԵՐԻ ԵՎ ՄՈՒՏՔԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և նկատի ունենալով «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում ստեղծված ֆինանսական իրավիճակը՝

որոշում եմ.

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2022-2023 թվականների ֆինանսական ելքերի և մուտքերի մշտադիտարկում իրականացնելու, ընկերության կողմից կատարված աշխատանքներն ուսումնասիրելու նպատակով:
2. Հաստատել աշխատանքային խմբի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Աշխատանքային խմբին՝ մշտադիտարկումն իրականացնել սույն թվականի օգոստոսի 24-ից սեպտեմբերի 6-ը ներառյալ և իրականացված աշխատանքների ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում արդյունքների վերաբերյալ ՀՀ Սյունիքի մարզպետին ներկայացնել համապատասխան հաշվետվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. օգոստոսի 23
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. օգոստոսի 23 -ի
N 302-Ա որոշման

ԿԱԶՄ
«Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2022-2023 թվականների ֆինանսական մուտքերի և ելքերի մշտադիտարկում իրականացնելու, ընկերության կողմից կատարված աշխատանքներն ուսումնասիրելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի

Ն. Ղազարյան	ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /նախագահ/
Կ. Բալյան	ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական
Ն. Գևորգյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ
Թ. Ստեփանյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Ա. Թադևոսյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ
Ն. Աթայան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ:

23.08.2023

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

Գլխավոր քարտուղար **Է. Մարտիրոսյան**